Հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 8-ից 10-ը «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարության քաղաքացիական պաշտպանության ակադեմիա» բարձրագույն կրթության դաշնային պետական բյուջետային զինվորական կրթական հաստատության 25-ամյա տարեդարձին մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**
   Մուշեղ Ղազարյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   ՌԴ Մոսկվայի մարզ քաղաք Խիմկի, 2017թ. դեկտեմբերի 8-ից 10-ը.
4. **Հրավիրող կողմը.**
   Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարության քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի պետ
5. **Գործուղման նպատակ**
   Մասնակցություն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարության քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի 25-ամյա տարեդարձին
6. **Քննարկված թեմաները.**
   1. Հանդիպում Ակադեմիայի ղեկավար կազմի հետ, քննարկվել են ՌԴ ակադեմիա գործուղված ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների ուսման առաջադիմության և կարգապահության հարցերը, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել ակադեմիայում սովորող ուսանողների քանակը մեկով ավելացնելու ուղղությամբ.
   2. Քննարկվել է նաև կազմակերպել Ակադեմիայում ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի և մարզային փրկարարական վարչությունների գլխավոր, ավագ և միջին խմբերում պաշտոններ զբաղեցնող փրկարարական ծառայողների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ.
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել Ակադեմիայի պետի և ավարտական քննական հանձանժողովի նախագահի հետ.
8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայամանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում իմ կողմից փաստաթղթեր չի ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարության քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի միջև համագործակցություն իրականացնել կոնֆերանսների, տեսակոնֆերանսների, սեմինարների, գիտաժողովների և հետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման, փոխայցելությունների միջոցով:

10. **Գործուղվողը.**

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-մայոր Մուշեղ Ղազարյան:

11. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

12.12.2017թ.: